

ՍԱՄՎԵԼ. ՄՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔԱՐՈԶ

«Բացեք, բացեք արդ զդրունսդ, զի ընդ մեզ է Տեր Աստուած մեր, արասց ևս զօրութիւն յիշարայելի և ի բեկումն թշնամեաց մերոց, որպէս և արար ալուր»:

«Բացեք, բացեք դռներն արդ, որովհետև մեզ հետ է մեր Տեր Աստված, դարձալ զորություն կտա Խարայելին և կործանում մեր թշնամիներին, ինչպէս որ արեց այսօր» (Հուդիթ ծԳ 18):

Մեծ է հայթանակի ուրախությունը: Հաղթանակի՝ հանուն ազատության, հանուն արդարության, ի փրկություն հայրենիքի:

Հայրենիք: Մի երկիր, որ տեսել է հայածանք ու պատերազմ, վիշտ ու արյուն, բայց և հայթանակ ու ցնծություն:

Հայրենիք: Այս մայր Բողը, որտեղ ծընվել ենք ու ամեն, որտեղ հնչել է մեր մայրերի քաղցրաբարբառը, որտեղ մայրենի լեզվով թոթովել ենք մեր առաջին խոսքերը: Այստեղ է հիմնվել մեր հայրական օջախը, և առ ել պիտի լինի մեր վերջին հանգրվանը:

Եվ զոյ չէ, որ հայրենիքի համեմա տածած սերը նոյնքան բնական է, որքան սերը դեպի ծնողները: Նա է մեզ համախմբում, ուժ տալիս և մղում սխրագործությունների:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, Աստվածաշունչ Գիրքը մեզ անհուն հավատքով տոգորիված հայրենասիրության բազում օրինակներ է տալիս: Ահա և դրանցից մեկն է Հուդիթը:

Բոնակալ նարուգողնոնասորի օրոք, ճրագրավար Հողովելնեսի զորքերի մեծ հայթանակները երկուուի մեջ էին գցել Փոքր Սահայի, Կիլիկիայի և Սիրիայի բնակիչներին, որոնք փորթացին առանց դի-

մադրության հանձնվել Հողովելնեսին և հայտնել ճրանց իրենց հպատակությունը: Իսկ այդ միջոցին իրենաները, որոնք աչքի լուսի պես էին պահում իրենց սուրբ քաղաք Երուսաղեմը և Տաճարը, Հովակիմ քահանայապետի առաջնորդությամբ կոչեր էին անում ամրացնելու շրջակա քաղաքների, հատկապես Սամարիայի պաշտպանությունը:

Իմանալով իրեաների հայտապատրաստությունների մասին, Հողովելնեսը ճրանց հանդառությունից զայրությով լցված, հարցուիրդ է անում, թե այդ ի՞նչ ժողովուրդ է ապրում այդ քաղաքում և թե ինչո՞ւ են ճրանք բոլորից առավել համառում հանձնվելու: Հողովելնեսին պատասխանում են, որ իրեաներն են ապրում այդ քաղաքում, որ ճրանց ուժը իրենց Աստծո զորության մեջ է: Հողովելնեսը ցաման մեջ հրամայում է պաշարել քաղաքն ու զրկել շրից:

Սամարիայի բնակիչները 34 օր քաջար դիմացան, սակայն զրի պակասը կամաց-կամաց մկնեց տկարացնել ճրանց, և ուժապատ ժողովուրդը պահանջեց, որ քաղաքը հանձնվի: Ողիան՝ ճրանց առաջնորդը, կարողացավ ժողովուրդին համոզել հինգ օր էլ սպասել Շիրոշ օգնությունը ստանալու ակնկալիքով: Եվ Տերը չզրկեց Խարայելի տունը իր ողորմությունից, այլ հարվածեց, հեռացրեց թշնամիներին ձեռամբ Հուդիթի:

Հուդիթը մի երիտասարդ այրի էր՝ քարեպաշտ ու առաքին: Սիրում էր ճրանց ժողովուրդը, հարգում ու պատվում: Լսելով քաղաքը հանձնելու մասին, նա շտապեց առաջնորդների մոտ և հայտնեց, որ Տերն իր միջոցով պիտի փրկի իրենց հայրենի

երկիրը, և խնդրեց, որ իրեն թողնեն դուրս գալ քաղաքից: Եվ Հույսիթը զուգված, զարդարված, օծված անուշահուտ բալասանով, իր նամիջուի մետ միասին, գիշերով դուրս եկավ քաղաքից: Հասավ թշնամիների բանակատեղին և հայտնեց, որ ինքը խեղճ մի փախատական է և գնում է իրենց զորավարի մոտ: Նա կարողացավ Հողովիեննեսին համոզել, որ իր ժողովուրդը մեղք է գործել և դրա համար իրենց Տեր Սատվածը թշնամու ձեռքը պիտի մատնի Հրեատանի ողջ ժողովուրդին: Հողովիեննեսը, գերված Հույսիթի գեղեցկությամբ և հաճայցած նրա խոսքերից, հավատաց նրան և ընդունեց ասպեքտականությամբ ու բազում պատիվներով: Մի քանի օր անց Հողովիեննեսը խնջույք կազմակերպեց և նույն գիշերուն էլ զոհվեց աներկյուու կնոջ ձեռքով: Երբ գինարբուրի բոլոր մասնակիցներն արդեն գնացել էին և Հույսիթը մենակ էր մնացել Հողովիեննեսի հետ, որը սաստիկ գինովցած՝ ընկդմվել էր խոր քնի մեջ, Հույսիթը վերցրեց նրա սուրը, բռնեց նրա մագերից և մրմթացալով: «Տէր զօրացո զիս», մեկ հարվածով, անվարան, կտրեց չար ոստիի գլուխը: «Նույն գիշեր նա վերադարձավ իր հայրենի քաղաք և հայտնեց փերկության լուրը՝ նրանց հանձնելով Հողովիեննեսի գլուխը:

Սասպիտվ, քույրեր և եղբայրներ, փափկատն մի կի՞ն՝ ապավինելով Աստծո զորությանը շնորհիվ իր ամսասան հավատքի և անհուն հայրենասիրության, կառողացավ փրկել իր հայրենի երկիրն ու հարացած ժողովրդին:

Լսելով Հույսիթի սիրանքի մասին, մեր հիշողության մեջ մեկի-մեկի վեր են նաև ունենում մեր ժողովորի դառն ճակատագրի ու նրա անձնվեր զավակների հերոսական դրվագները: Շատ ու շատ անգամ է վտանգվել մեր հայրենիքը, անընդհատ ունենատակ է արվել բիրու ու վայրագ ճվաճողների կողմից, սակայն միշտ էլ շնորհիվ հավատքի ու հայրենասիրության, նրա արի ու քաջ հոգևոր և աշխարհիկ առաջնորդների, հայ ժողովուրդը կարողացել է դիմակայել թշնամիներին, պահանձել ու պաշտպանել իր ինքնությունը, իր լեզուն ու ազգային արժանապատվությունը: Հայր ամենաօրհնաական պահին երբեք չի խնացել իր կյանքը հայրենիքի ու խեղճի պատության համար, նույնիսկ այն դեպքերում, երբ համոզված է եղել, որ եթք սեփական անձի կորուսն է: Քանի-քանի հույսիթներ ու մակաբայցիներ են եղել մեր պատմության մեջ, քանի-քանի երանելի

նահատակներ ու փառքով պաակված հեռուսներ:

Սայօդ Հայատանայաց Առաքելական Եկեղեցին մեծ ոգևորությամբ տոնում է իր ազգային մեծագույն տոներից մեկը՝ Վարդանաց սրբազն տոնը: Բազմերախտ հայ ժողովուրդը ազգային հայրատության ամիսուն զգացումով հարզանքի և պաշտամունքի տորք է մատուցում Ավարայրի դաշտում ընկած երանելի նահատակների խնկելի հիշատակին, որոնք «Վարդագյն արեամբն իրենանց պաակեցին զեկեղեցի»:

Մի թե Աստվածաշնչին վայել պատում չէ Ավարայրի ճակատամարտը, նրա հերոսական ոգին, վասն հավատո, վասն հայրենիքի և վասն բարձր ճապատակների զոհվելու շունչը. ինչպէս էր հայրենասեր ժողովուրդն աղաղակում. «Թող մեր արյունը թափի մարտիրոսների արյան հնան, միայն թէ մեր հայրենիքն ու մեր եկեղեցին շընկնի հեթանունների ձեռքը»:

Մի թե կարելի է հիպարտանալ ու չպարծենալ հայ հոգևորականների և իշխանների անշահ և բարեպաշտ ոգով, որոնք Արտաշատի ժողովին անվարան հայտարարեցին. «Յասմ հաւատու զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակը և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հոր...»:

Մի թե հնարավոր է չզմայվել ու չհուզվել Հույսիթին հավասար ու վայել՝ Հայոց աշխարհի փափկատն տիկնանց ինքնամուցությամբ, որոնք «մոռացան իրենց կանացի տկարությունը և առքին տղամարդիկ դարձան հոգւոր պատերազմի մեջ. միամտությամբ հայլեցին խորամանկությանը. խոնարհությամբ հայլեցին ամբարտավանությանը. աղոթքով բաց արին երկների փակ դուները և սուրը խոնրիվածքներով հրեշտակներին ցած բերին փրկության համար»:

Վարդանանք և Ղևոնյանք ապացուցեցին, որ հայրենասիրությունը, ազատության սերը ոչ մի զոհաբերության առաջ կանգ չի առնի, հայ մարդը ամեն նեղություն ու տառապանք կըրի հայրենիքի սիրու և իշճի ազատության համար, իր կյանքըն անգամ չի խնայի, զի «մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»:

Հայոց մեծ պատերազմի՝ Ավարայրի հերոսական շունչն ու անձնվեր ոգին հայ ժողովուրդի համար հանդիսացել են խեղճի պատության ու հայրենասիրության շղժգունող և հավետ կենդրանի խորհրդանշան, ոգևորության անպատ աղբյուր և բարձրագույն օրինակ:

Մի՞թե մի նոր Ավարայր չեր Սարդարապատի բախտորոշ հերոսամարտը:

Այն ժամանակ, երբ քնաշնջման սև սպառնալիքը ամսի նման կախված էր ազգի գլխին, որոշվում էր մի ողջ ժողովրդի ճակատագիրը, հայերը՝ մեծ թե փոքր, տղամարդ թե կին, միաբանվեցին ու վեր ելան կենաց-մահու պայքարի: Եվ, եթե Վարդանն ու Ղևոնդ Խարայելի հերոսների մասին պատմելով էին ոգեշնչում զորքին, ապա Սարդարապատի հերոսամարտից առաջ ժողովրդի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները վարդանների ու ղևոնդների օրինակով էին կոչում պայքարի: Հայուանակեց հայի ազատարադ ու հայրենանը-վեր ոգին, և ոչ միայն հայուանակեց, այլև ճանապարհ հարթեց Հայաստան աշխարհի գալիք հարության համար:

Սակայն երկար չտևեց երազած խաղաղությունը: Գլուխ էր բարձրացրել ֆաշիզմի ամենակույ հրեշը: Խորհրդային մեծ հայրենիքի համար այդ օրինասական ժամին, հայ ժողովուրդը իր լավագույն զավակներին ուղարկեց պատերազմի դաշտ, մյուս եղբայր ժողովուրդների հետ միասին կուլերու այդ հրեշի դեմ, պաշտպանելու համար մեր ազատությունը, պատիվը, մեր մայրերի ու քույրերի, երեխանների ու կանաց երշանիկ կյանքը:

Ծրանք՝ հայրենիքի քաջարի ուազմիկները, մարտի գնալով, իրենց հերոս նախան-

ների՝ Վարդանանց օրինակով երդմում էին չվերադառնալ տուն իրենց կանաց և երեխանների մոտ այնքան ժամանակ, քանի դեռ լիովին չեն ոչնչացվել և հայրենի հողից դուրս չեն քշվել թշնամիները:

Դուրս քշվեց հրեշը և գլխաւուեց իր իսկ որչում, «զի ամեներեւան որ սուր առնուցուն, սրով անկանիցին» (Մատթ. 19: 52):

Այսօր, երբ դարեր շարունակ տառապած հայ ժողովուրդն ունի մոխիրներից հարություն առած ու ծաղկող իր երազած հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանը, որտեղ Մայր Էջմիածնի զանգերն այլևս դժբախտություն չեն գումարում, որտեղ տիրում է մշտարադ խաղաղությունը, շատ ավելի կարևոր է անձնվեր ոգի, հայրենիքին ու ազգին ծառայելու անշահախնդիր պատրաստակամությունն, որպեսզի կարողանանք և՛ իրք ազգ ապրել, և՛ մեր մեծ հայրենիք՝ Եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքի արժանի անդամը լինել:

Այդ, մեզ՝ քրիստոնյաներին, հարկ է անձանձիր գործել ու աղոթել առ Աստված «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան Սրբոյ Եկեղեցոյ» և պարտ է անդադար հիշել, որ «նա արաց գօրութիւն մեզ՝ ի բեկումն թշնամեաց մերոց»:

«Ծնորհք, սէր և խաղաղութիւն ի Տեաննէ եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանսդ: Ամէն»:

